ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԲԱԳՐԵՎԱՆԴՈՒՄ ԵՎ ՏԱՐՈՆ – ՍԱՍՈՒՆՈՒՄ IX-XII ԴԴ.

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Թե՛ խորհրդային ժամանակաշրջանի և թե՛ մերօրյա որոշ ուսումնասիրողներ կարծում են, որ Մամիկոնյան նշանավոր իշխանական ընտանիքը պատմության թատերաբեմից վերջնականապես դուրս եկավ VIII դարի վերջին կամ IX դարի առաջին տասնամյակին և նրանց ամբողջ տիրույթներն անցան կա՛մ Բագրատունիներին, կա՛մ արաբներին: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ Մամիկոնյանները, լինելով Հայաստանի կարևորագույն հողատերերից մեկը, 774-775 թթ. համաժողովրդական ապստամբության պարտությունից հետո՝ IX դ. առաջին տասնամյակին, կորցնելով Տայքը, Տարոնի մեծ մասը, Արշարունիքի[1] իրենց պատկանող հատվածը և մի շարք այլ գավառներ, այնուամենայնիվ IX դարի առաջին կեսին պահպանեցին իրենց կալվածքների որոշ մասը, այդ թվում՝ Բագրևանդը, Խութի և Սասունի շրջանները, ինչպես նաև տիրույթներ Արագածոտն գավառում: Այս գավառներն էլ IX դարի երկրորդ կեսից սկսած, դարձան Մամիկոնյանների գործունեության կենտրոնները:

Նույն ժամանակահատվածում նրանք մասնակիցը եղան Հայաստանում կատարվող քաղաքական անցքերին:

Նախ նշենք, որ մի քանի հարյուրամյակի ընթացքում թե՛ երկրին մատուցած ծառայությունների դիմաց, թե՛ խնամիական կապերի շնորհիվ, թե՛ այլ հանգամանքներում Մամիկոնյանների տիրույթները, Տարոնից և Տայքից[2] բացի, ընդգրկեցին նաև Հայաստանի մի շարք շրջանները: 439 թ. վախճանվեց Լուսավորչի տան վերջին ժառանգը՝ Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը. նա արու զավակ չունենալու պատճառով տոհմական հսկայական կալվածքները, դրանց թվում՝ Բագրևանդ գավառը, կտակեց իր դստեր՝ Սահականույշի[3] որդիներին:

---

[1] «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ» (այսուհետև Վարդան վարդապետ), Վենետիկ, 1862, էջ 76-77:

[2] Տարոնում և Տայքում Մամիկոնյանների գործունեությանը կանդրադառնանք առանձին աշխատանքում: Ա. Եղիազարյանը կարծում է, որ 774-775 թթ. ապստամբությունից հետո Տայքը կցվել է Աշոտ Մսակերի տիրույթներին (տե՛ս **Ա. Եղիազարեան**, Բագրատունիները եւ վրացական թագաւորութեան պետական գաղափարաբանութեան ձեւաւորումը, «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրութ 2013, էջ 69):

[3] Սահականույշն ամուսնացած էր սպարապետ Համազասպ Մամիկոնյանի հետ (տե՛ս «Ղազարայ Փարպեցւոյ, Պատմութիւն Հայոց», «Մատենագիրք Հայոց», հ. Բ., Ե դար, Անթիլիաս- Լիբանան, 2003, էջ 2235):

Ինչպես կտեսնենք ստորև, Հովհան Մամիկոնյանը, խոսելով VI դարում իր գործունեությամբ աչքի ընկած Մուշեղ Մամիկոնյանի մասին, նրա իշխանության սահմաններում է նշում նաև Սասուն գավառը[4]:

Հետագայում, հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661-685 թթ.) կառավարման ժամանակահատվածում նրանց էր պատկանում Արագածոտն գավառը[5]:

Այսպիսով, չունենալով նախկին հզորությունը, այնուամենայնիվ, Մամիկոնյան իշխանական ընտանիքի տարբեր ճյուղերի ձեռքին էին մնացել վերը նշված գավառները: Նախ սկզբնաղբյուրներում տեղեկություններ ենք գտնում VIII դ. վերջին և IX դարի սկզբին իր գործունեությամբ աչքի ընկած Դավիթ Մամիկոնյանի մասին: Նոր նշանակված ոստիկան Խուզայամա իբն Խազիմինի (786-787 թթ.)[6] կանչով նրան ներկայացան Հարավային Հայաստանի ապստամբությունը գլխավորող Համազասպ և Սահակ Արծրունիները[7]: Մինչ ոստիկանին ներկայանալը, հավատ չընծայելով իրենց կրտսեր եղբորը՝ Մերուժանին, Համազասպ Արծրունին «զվերակացութիւն աշխարհին և զգործ իւրեանց տային ի ձեռն Դաւթի Մամիկոնէի…»[8]: Բ. Հարությունյանը գտնում է, որ դա պայմանավորված էր ավանդույթի ուժով, և մինչև նոր ոստիկանի ժամանումը 786 թ. Դավիթ Մամիկոնյանը նշանակվել է հայ իշխանների առաջնորդ[9]: Մեր նպատակից դուրս է քննության ենթարկել, թե ինչ հանգամանքներում է Դավիթ Մամիկոնյանը նշանակվել Հայաստանի կառավարիչ կամ պաշտոնավարել Վասպուրականում որպես վերակացու: Նշենք, որ ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ VIII դարի վերջին և IX դարի սկզբին, այնքան մեծ էր Մամիկոնյանների հեղինակությունը, որ նրանք էին վարում այդպիսի կարևոր պաշտոնները: Թե Դավիթ Մամիկոնյանը մինչև երբ կառավարեց Վասպուրականը, հնարավոր չէ պարզել աղբյուրներում տեղեկություններ չլինելու պատճառով: Կարող ենք միայն նշել մոտավոր թվականը, այն է՝ 786-ից մինչև 806 թ.[10] ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ Համազասպ և Սահակ Արծրունիների նահատակվելուց մինչև Աշոտ Բագրատունու Հայոց իշխան հռչակվելը (806-826 թթ.): Վ. Վարդանյանը կարծում է, որ Դավիթ Մամիկոնյանի ժառանգները հողատիրույթներ ստացան Վասպուրա-

---

[4] Տե՛ս **Յովհան Մամիկոնեան,** Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջաբանով Աշ. Աբրահամյանի (այսուհետև՝ **Հովհան Մամիկոնյան**), Եր., 1941, էջ 158-ի ծան.:

[5] Տե՛ս «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 14:

[6] Տե՛ս **Հ. Նալբանդյան,** Արաբացի ոստիկանները Հայաստանում (7-րդ դարի վերջից մինչև Աշոտ Ա-ի գահակալությունը), «Տեղեկագիր հաս. գիտ.», 1956, թիվ 8, էջ 114:

[7] Համազասպ և Սահակ Արծրունիների գործունեության մանրամասն քննությունը տե՛ս **Վ. Վարդանյան,** Արծրունիները հայոց պատմության մեջ, Եր., 2002, էջ 60-65, **Բ. Հարությունյան,** Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Եր., 2016, էջ 119-125, **Ա. Վարդանյան,** Տարոն գավառի պատկանելիության հարցի շուրջ (VIII դ. երկրորդ կես - IX դ. սկիզբ), «Հայոց պատմության հարցեր» (այսուհետև՝ ՀՊՀ), Եր., 2016, էջ 41-51:

[8] «Սոփերք Հայկականք», ԺԲ, Վենետիկ, 1854, էջ 65:

[9] Տե՛ս **Բ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 125:

[10] Տե՛ս **Ա. Վարդանյան,** նշվ. աշխ., էջ 49:

կանում[11], և հետագայում Ապուպելճ Արծրունին ամուսնացավ Մամիկոնյան իշխանուհու հետ[12]: Բ. Հարությունյանը հավատ չի ընծայում այդ տեսակետին՝ նշելով, որ Ապուպելճ իշխանը կարող էր ամուսնանալ Մամիկոնյան տոհմից որևէ իշխանադստեր հետ, և բնավ էլ պարտադիր չէ, որ լիներ Վասպուրականից[13], այսինքն՝ Դավիթ Մամիկոնյանի սերնդից: Հավանական ենք համարում, որ Ապուպելճ Արծրունու հետ ամուսնացած Մամիկոնյան իշխանուհին Դավիթ Մամիկոնյանի սերնդից էր և հետագայում բյուզանդական արքունիքում մեծ անուն հանած Քուրդիկ Մամիկոնյանի քույրն էր: Իսկ վերջինս IX դարի կեսերին տիրում էր Բագրևանդ գավառին[14]: Թովմա Արծրունին նշում է, որ Գուրգեն Ապուպելճն արաբ զորավար Բուղայի նկատմամբ մի շարք հաղթանակներ տանելուց հետո ինչ-որ ժամանակ ստիպված է լինում ապաստանել «... առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ»[15]: Սա ևս մեկ անգամ ապացուցում է այն հանգամանքը, որ IX դարի կեսերին Մամիկոնյան Քուրդիկ և նրա որդի՝ Գրիգոր իշխանները տիրում էին Բագրևանդին և հարակից շրջաններին: Ինչպես բովանդակ Հայաստանը, այնպես էլ Բագրևանդը ռազմակալվեց արաբների կողմից: Մի քանի տարվա ընթացքում Բուղան կարողացավ վերագրավել ամբողջ Արմինիա վարչական շրջանը և գերել տեղի իշխաններին[16]: Թովմա Արծրունին, թվելով Բուղայի կողմից գերեվարված և 855 թ. Սամառա աքսորված իշխաններին, Սմբատ սպարապետից հետո նշում է՝ «Գրիգոր Քուրդկայ որդի Մամիկոնէից տէր»[17]: Պատմիչը գերյալ իշխանների մեզ հասած ցանկում Գրիգոր Մամիկոնյանին հիշատակում է արաբներին մեծ ծառայություն մատուցած սպարապետ Սմբատ Բագրատունուց անմիջապես հետո, որը վկայում է նրա հեղինակության մասին: Այս փաստը ևս մեկ անգամ թույլ է տալիս պնդելու, որ Մամիկոնյանները 774-775 թթ. ապստամբության պարտությունից հետո դեռևս երկար ժամանակ մեծ դեր են խաղացել երկրի քաղաքական կյանքում: Բերենք մեկ փաստ ևս: Բուղայի արշավանքից կարճ ժամանակ անց վիճակը փոխվեց: 856 թ. նոր ուժով պատերազմ վերսկսվեց Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի միջև: Մուտավաքիլ խալիֆը (847-861 թթ.) ստիպված էր իր զորքերը հանել Հայաստանից և նետել Բյուզանդական կայսրության

---

[11] Տե՛ս **Վ. Վարդանյան,** նշվ. աշխ., էջ 65:

[12] Տե՛ս **Թովմա Արծրունի** և **Անանուն,** Պատմություն Արծրունյաց տան (այսուհետև՝ Թովմա Արծրունի), բնագիրը հրատարակության պատրաստեց՝ Վ. Վարդանյան, Եր., 1985, էջ 301:

[13] Տե՛ս **Բ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 125: Այդ ամուսնությունից ծնվեց IX դ. երկրորդ կեսին մեծ հռչակ վայելող Գուրգեն Ապուպելճը (տե՛ս **Թովմա Արծրունի**, էջ 302):

[14] Տե՛ս **Թովմա Արծրունի,** էջ 302:

[15] Նույն տեղում:

[16] Տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», հաւաքեց եւ թարգմանեց Բագրատ Խալաթեանց, Վիեննա, 1919, էջ 77-79, 98:

[17] **Թովմա Արծրունի**, էջ 296:

դեմ, որը հաջողությամբ հարձակումներ էր սկսել Եփրատի շրջանում[18]: Առաջ անցնելով նշենք, որ բյուզանդացիները հայազգի զորավար Պետրոնաս Մամիկոնյանի գլխավորությամբ Պոսոն վայրում ջախջախիչ պարտության մատնեցին արաբներին[19]: Սկսված պատերազմը ստիպեց խալիֆայությանը փոխել վերաբերմունքը նվաճած երկրների, մասնավորապես՝ Հայաստանի նկատմամբ: 857-859 թթ. ընթացքում արաբական աքսորից Հայաստան վերադարձան հայ նախարարները, որոնց մեծամասնությունը ազատություն ստացավ հավատուրացության գնով[20]: Բագրևանդի տեր Գրիգոր Մամիկոնյանն այն քչերից էր, որը անդրդվելի մնաց իր դավանանքի մեջ: Մամիկոնյան իշխանին հաջողվում է փրկվել արաբական գերությունից և վերադառնալ հայրենիք: Վարդան պատմիչն այսպես է նկարագրում տեղի ունեցած դեպքերը. «Եւ Գրիգոր Մամիկոնեան արիաբար պահեալ զհաւատն, ելանէ ի բանտէն և գայ մտանէ ի գաւառն իւր Բագրևանդ, և կամէր ամրանալ ի գաւառն Գաբեղինից ի Գազանածական. որ և զկնի եօթն աւուրց մեռանի: Եւ իմացեալ ոստիկանին Մահմետի որ ի նայս առաքէ առ Աշոտ որդի Սմբատայ, զի ուր եւ իցէ ըմբռնեալ առ նա տարցի, և նորա հատեալ զգլուխ մեռելոյն, առաքէ առ նա, ասելով՝ թէ Կամեցաւ անցանել առ Յոյնս, և իմ զկնի առաքեալ՝ սպանի, և ահա գլուխ նորա: Եւ խնդաց Մահմէտ, և զգացուցանէ Ջափրի, և նորին հրամանաւ պատուէ զԱշոտ, տալով նմա զգաւառն Բագրեւանդ, և արծաթ բիւրս հինգ»[21]:

Ինչպես միշտ, Բագրատունիներն իրենց նպատակին հասնելու համար միջոցների ընտրության առջև կանգ չէին առնում, և Հայոց ապագա թագավորը հիսուն հազար արծաթի ու Մամիկոնյանների վերջին խոշոր տիրույթի՝ Բագրևանդի դիմաց կատարեց այդ քստմնելի արարքը: Եվ ինչպես նշում է Լեոն, «այդ տգեղ գործն արդարացնել չի կարելի, իհարկե, և ոչ մի նկատառումով»[22]: Հետազայի ուսումնասիրողները փորձել են կա՛մ չանդրադառնալ Աշոտ Բագրատունու արարքին, կա՛մ ինչ-ինչ հանգամանքներով մեղմել այն, սակայն, ինչպես նկատել է նշանավոր հայագետ Ն. Ադոնցը, «երբեք չպիտի ներվի մեծ իշխանին այս եղբայրասպան սուրը և ոչ այն անարգ արծաթը»[23]: Գրիգոր Մամիկոնյանի մահվամբ և Բագրևանդի կորստով Մամիկոնյանները ժամանակավորապես դադարեցին նշանակալի դեր խաղալ Հայաստանի քաղաքական կյանքում: «Եւ յայնմհետէ բարձաւ ի Հայոց յաշխարհէս ազգն Մամիկոնէից»[24]: Սակայն, ինչպես կտեսնենք, Հայաստանի տարբեր մասերում դեռևս կա-

---

[18] Տե՛ս **J. Laurent,** L՛ Arménie entre Buzance l՛ Islam, depuis la conquête arabe jusqu՛ en 886, Paris, 1919, էջ 215:

[19] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 15, «Բյուզանդական աղբյուրներ», Ե, **Թեոփանեսի Շարունակող**, Թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1990, էջ 107-109:

[20] Տե՛ս **Թովմա Արծրունի**, էջ 248:

[21] **Վարդան վարդապետ**, էջ 81:

[22] **Լեո**, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1967, էջ 497:

[23] **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, Եր., 2006, էջ 463:

[24] **Վարդան վարդապետ**, էջ 81:

յին նրանց ժառանգները, որոնք, ճիշտ է, համահայկական նշանակության հարցերում ժամանակավորապես մեծ դեր չէին խաղում, սակայն որոշ շրջաններ պատկանում էին Մամիկոնյաններին:

Վարդան պատմիչի վերը բերված հաղորդումից կարելի է եզրակացնել, որ ոչ միայն Բագրևանդը, այլև Գաբեղյանքը գտնվում էին Մամիկոնյանների տիրապետության ներքո. «.... Կամէր ամրանալ ի գաւառն Գաբեղինից»[25]: Գավառը գտնվում էր Արշարունիքի և Բագրևանդի միջև[26]: Եվ ինչպես իրավացիորեն նշում է Է. Դանիելյանը, «Արտագերսից քաշվելուց հետո այն նույնպես Բագրևանդի Մամիկոնյանների (Գրիգորի-Ա. Վ.) ձեռքում էր»[27]:

Գրիգոր Մամիկոնյանի մահվամբ ոչ միայն V դարի 30-ական թվականներից Մամիկոնյանների կալվածք դարձած Բագրևանդը, այլև նրանց կողմից վերահսկվող Գաբեղյանքը անցնում են Հայոց իշխան Աշոտ Բագրատունուն:

Ինչպես վերը նշել ենք, VII դ. Մամիկոնյանները տիրույթներ ունեին նաև Արագածոտն գավառում: 661 թ. Հայոց իշխան է դառնում Գրիգոր Մամիկոնյանը[28]: Ղևոնդի վկայությամբ՝ Մամիկոնյան իշխանն իր նստավայր էր դարձրել Արագածոտն գավառի Արուճ ավանը: Չանդրադառնալով Մամիկոնյան իշխանի Արուճում կատարած շինարարական գործունեությանը[29], նշենք, որ կառուցված եկեղեցին և ապարանքը վկայում են Մամիկոնյանների կալվածքների մասին Արագածոտնում: Վերջինս, ինչպես Այրարատի գավառների մեծ մասը, պատկանել էր Արշակունյաց արքայատոհմին: 428 թ. թագավորական տան անկումից հետո այն բաժանվեց մի շարք նախարարական տների միջև[30]: Մամիկոնյաններին անցավ Արագածոտն գավառի այն մասը, որ նախկինում պատկանել էր եկեղեցուն՝ մասնավորապես Լուսավորչի ընտանիքին: Հետագայում, երբ IX դարի սկզբին Մամիկոնյանները հայտնի դեպքերի պատճառով կամաց-կամաց սկսեցին նվազ դեր խաղալ Հայաստանի քաղաքական կյանքում, Արագածոտն գավառը նույնպես IX դ. կեսերին անցավ Բագրատունիներին, իսկ հետագայում՝ Պահլավունիներին:

Ինչպես վերը նշվեց, Մամիկոնյանների ժառանգները VIII դ. վեր-

---

[25] Նույն տեղում: Ա. Եղիազարյանը գտնում է, որ ամբողջ Գաբեղյանքը չի պատկանել Մամիկոնյաններին, այլ Բագրևանդին հարող հատվածը (տե՛ս «Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.)», Եր., 2011, էջ 92):

[26] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Եր., 1963, էջ 46 և կից քարտեզը, դ 5, **նույնի՝** Հայաստանը և հարակից երկրները 855-953 թթ., Եր., 1976, քարտեզ, **Թ. Հակոբյան**, Մեծ Հայք (ըստ V – XV դդ. աղբյուրների), Եր., 1966, քարտեզ, «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, պատ. խմբագիր՝ Բ. Հարությունյան, Եր., 2008, էջ 31, 41:

[27] **Է. Լ. Դանիելյան**, Թոռնիկյանների քաղաքական դերը X դ. հայ-բյուզանդական հարաբերություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), Եր., 1977, թիվ 10, էջ 65, ծան. 10:

[28] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 14, «Յովաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 89-90:

[29] Այդ մասին մանրամասն տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 62-63, **И. Орбели.** Багаванская надпись 639 года и другие армянские ктиторские надписи VII века. Избранные труды. Ер., 1963, էջ 402:

[30] Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 386, **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1968, էջ 143:

ջերից սկսած իրենց գոյությունը պահպանեցին Սասունում[31] և նրա շրջակայքում: Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը հանգեցրեց Տարոնում Բագրատունյաց իշխանության կործանմանը, որի շնորհիվ Մամիկոնյանները ակտիվացան իրենց վաղեմի հայրենական կալվածքներում՝ Տարոնում և հարակից շրջաններում: Բյուզանդական կայսրությունը, որ IX դարի կեսերից սկսած մի շարք հաղթանակներ տարավ խալիֆայության նկատմամբ, լուծեց արաբա-բյուզանդական մի քանի հարյուրամյակ ձգվող պայքարի ելքը: Կայսրությունը, օգտվելով խալիֆայության թուլացումից, ոչ միայն փորձում էր նրան դուրս մղել տարածաշրջանից, այլև այդ ճանապարհին գրավել հայկական հողերը: X դ. կեսերից սկսած կայսրությունը կամաց –կամաց մոտենում էր Հայաստանի կենտրոնական շրջաններին: 949 թ. Կարինի անկումով[32] բյուզանդական ագրեսիվ արտաքին քաղաքականության հաջորդ զոհը պետք է դառնար բավականին թուլացած Տարոնի Բագրատունիների իշխանությունը: Ըստ Հովհաննես Սկիլիցեսի՝ Տարոնի տերերն այն կայսրությանն են զիջել «կամավոր»[33]. «Կայսեր կողմն անցան Գրիգոր ու Բագարատ եղբայրները, նրան ընձեռելով իրենց Տարոն երկիրը»[34]: Այս առումով Ասողիկը նշում է. «... վախճանեցաւ Տարօնոյ իշխան Աշոտ: Եւ Տարօնոյ Հոռոմք տիրեցին»[35]: Կամավոր թե բռնի ուժով 968 թ.[36] Բյուզանդիայի կողմից Տարոնի մեծ մասի գրավումով այստեղ վերացավ Բագրատունիների իշխանությունը: Նպատակ չունենալով քննել Մամիկոնյան-Թոռնիկյան իշխանական ընտանիքի ամբողջ գործունեությունը, ինչը մեր աշխատանքի շրջանակներից դուրս է, և դրան անդրադարձել են մի շարք հեղինակներ[37], կանդրադառնանք միայն Տարոն-Սասունում

---

[31] **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 163: Կ. Թումանովի կարծիքով, Տարոնում (Մամիկոնյանները) ամբողջությամբ չեն ոչնչացել և իրենց գոյությունն են պահպանել գավառի հարավ-արևմուտքում (տե՛ս **C. Tumanoff**, Studies in Christian Caucasian history, Georqetown University Press, 1963, էջ 209-211, 270):

[32] Տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 179, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, **Կոստանդին Ծիրանածին**, Թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի (այսուհետև՝ **Կոստանդին Ծիրանածին**), Եր., 1970, էջ 17-18:

[33] Այդպիսի «կամավոր» զիջումներ հետագա տասնամյակներում ևս տեսնելու ենք Հայաստանի տարբեր մասերում. 1000 թ.՝ Տայքը, 1021 թ.՝ Վասպուրականը, 1045 թ.՝ Անին, 1065 թ.՝ Կարսը և մի շարք այլ նահագներ:

[34] «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, **Հովհաննես Սկիլիցես**, Թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1979, էջ 28:

[35] **Ասողիկ**, էջ 185:

[36] Տարոնը բյուզանդացիների կողմից գրավելու թվականի վերաբերյալ մանրամասն տե՛ս **Գ. Գրիգորյան**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Եր., 1983, էջ 146-148, 155, **նույնի**՝ Տարոնի իշխանությունը, Հայոց պատմություն, հ. II, Միջին դարեր, (IV դար – XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես – XVII առաջին կես), (այսուհետև՝ «Հայոց պատմություն»), Եր., 2014, էջ 114:

[37] Տե՛ս **N. Adontz**, Les Taronites en Arménie et à Byzance, Études Arméno-Byzantines, Libonne, 1965, էջ 197-263, **Ն. Ակինեան**, Թոռնիկեանց ճիւղագրութիւնը // Մատենագրական հետազօտութիւններ, հ. Դ, Վիեննա, 1938, էջ 49-88, **Վ. Պետրոյան**, Սասունի Թոռնիկյան իշխանությունը // Տեղեկագիր հաս. գիտ., 1955, թիվ 2, էջ 85-96, **նույնի**՝ Սասուն, Եր., 2016, էջ 107-133, **Каждан А.** Армяне в составе господстрвующего класса Византийской империи в IX- XII вв., Ер., 1975, էջ 47-57. **Ա. Տեր-Ղևոնդյան**, Սասունի Թոռնիկյանները // Հայ ժողովրդի պատմություն,

նրանց ընտանիքի գործունեության առանձին դրվագների:

Ն. Ակինյանը նշում է. «Մթութեան մէջ է Թոռնիկեան տան խանձարուրքը»[38]: Ուսումնասիրողները կարծում են, որ Թոռնիկյան անվանումը ձևավորվել է VIII դ. վերջին Մամիկոնյան տոհմից սերած իշխանական տների ընդհանուր անվանումից[39]: Հարցին անդրադարձած հետազոտողների մեծամասնությունը ճգնում է գտնել մոտավոր այն թվականը, երբ Մամիկոնյան-Թոռնիկյանները հաստատվել են Սասունում: Սակայն այնտեղ նրանք հաստատվելու կարիք չունեին, քանի որ VII դ. հեղինակ Հովհան Մամիկոնյանը, ինչպես վերը նշել ենք, խոսելով VI դ. նշանավոր ռազմական գործիչ Մուշեղ Մամիկոնյանի մասին, նրան համարում է «զտէրն Մշոյ և Խութայ, Տարօնոյ իշխանն և Սասնոյ»[40]: Այսինքն՝ VI դարում և գուցե դրանից էլ վաղ ժամանակներում Սասունը պատկանում էր Մամիկոնյաններին: Ինչպես ասվեց, 774-775 թթ. ապստամբության պարտությունից հետո՝ մի քանի տասնամյակ անց, Մամիկոնյանների տիրույթների մեծագույն մասն անցան այս կամ այն նախարարներին, նրանք սկսեցին ժամանակավորապես փոքր դեր խաղալ Հայաստանի քաղաքական կյանքում, և ինչպես նշում է Է. Դանիելյանը, նրանք հայրենական կալվածքներում սկսել էին ակտիվանալ IX դարի երկրորդ կեսից[41], այսինքն՝ Տարոնում, Բագրատունիների վերացումից հետո[42]: Սակայն վիճակը փոխվեց հատկապես IX դարի երկրորդ կեսին, երբ Մամիկոնյան տոհմի շառավիղները՝ Թոռնիկյաններ անվանումով, ստեղծված քաղաքական պայմաններում սկսեցին մեծ դեր խաղալ նախ Սասունում և ապա իրենց երբեմնի կալվածք Տարոնի մեծ մասում ու շրջակա գավառներում: Թոռնիկ անվանումը, ինչպես հայտնի է, առաջին անգամ հանդիպում ենք Թովմա Արծրունու մոտ՝ կապված հայտնի իրադարձությունների հետ, երբ 850 թ. Մուսա իբն Զուրարիան հարկահավաքության պատրվակով ներխուժեց Տարոն՝ փորձելով ձերբակալել իշխանաց իշխան Բագարատ Բագրատունուն[43]: Վերջինս օգնության կանչեց մի շարք հայ նախարարների՝ Աշոտ Արծրունու գլխավորությամբ, որոնց թվում էր նաև՝ «ի տանէն Բագրատունեաց Թոռնկայ որդի զօրոք իւրովք»[44]: Բոլոր հեղինակները, բացառությամբ Ն. Ակինյանի և Է. Դանիելյանի, գտնում են, որ խոսքը Բագրատունի իշխանի մասին է: Սակայն Ն. Ակինյանը պատմիչի հաղորդումը վե-

---

հ. III, Եր., 1976, էջ 483-487, **Է. Լ. Դանիելյան**, Տարոնի և Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանները (XI-XII դդ.) // Պատմա-բանասիրական հանդես, այսուհետև՝ ՊԲՀ, 1979, թիվ 2, էջ 137-153, **Юзбашян К.** Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв. М., 1988, էջ 117-124, 175-178, **Степаненко В.** Чортванели, Торники и Таронитьі в Византии // Античная древность и средние века. Екатеринбург, 1999. Вып. 30, էջ 130-147, և ուրիշներ:

38 **Ն. Ակինյան**, նշվ. աշխ., էջ 49:

39 Տե՛ս **Ս. Երեմյան, Է. Լ. Դանիելյան**, Թոռնիկյաններ, ՀՍՀ, հ. 4, Եր., 1978, էջ 200:

40 **Հովհան Մամիկոնյան**, էջ 158-ի ծան.:

41 Տե՛ս **Է. Լ. Դանիելյան**, Տարոնի և Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանները (XI-XII դդ.), էջ 143:

42 **N. Adontz**, նշվ. աշխ., էջ 235:

43 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, Արաբական աղբյուրներ, Բ, **Իբն Ալ-Ասիր**, թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, (այսուհետև՝ **Իբն Ալ-Ասիր**), Եր., 1981, էջ 157:

44 **Թովմա Արծրունի**, էջ 174:

բականգնում է հետևյալ կերպ՝ «ի տանէն Բագրատունեաց < Իշխանիկ որդի... զօրօք իւրովք>: < ի տանէն Մամիկոնէից Յովհան (կամ Քուրդիկ) Թոռնկայ որդի»[45]: Իսկ Է. Դանիելյանն իրավացիորեն գտնում է, որ հնարավոր է «Բագրևանդաց» բառը բնագրում հապավված լիներ և հետագա գրչի կողմից հասկացվեր «Բագրատունեաց»[46]: Այո՛, «Բագրատունեաց» անվանումն ընդմիջարկություն է և Թովմա Արծրունու աշխատանքում ներմուծվել է հետագա դարերի ընթացքում արտագրողների կողմից:

Ն. Ակինյանը ենթադրում է, որ Մամիկոնյան-Թոռնիկյանների այս ճյուղը արյունակցական կապ ուներ Բագրևանդի Մամիկոնյանների[47] հետ, այսինքն՝ նկատի ունի Քուրդիկ կամ նրա որդի Գրիգոր Մամիկոնյաններին: Այս կերպ կարելի է եզրակացնել, որ Թոռնիկյանները սերում են X դ. սկզբին իր գործունեությամբ աչքի ընկած Սմբատ Մամիկոնյանից[48]: Սակայն էականն այստեղ այն չէ, թե Թոռնիկյանները Մամիկոնյանների որ ճյուղին էին պատկանում՝ Բագրևանդի, Տայքի, Տարոնի թե այլ. կարևոր է այն հանգամանքը, որ նրանք կարողացան հաղթահարել արաբների և ինչո՞ւ չէ՝ նաև հայ նախարարների դիմադրությունը և նորից ստեղծել ժամանակի հայկական հզոր իշխանություններից մեկը:

Երբ բյուզանդացիներին հաջողվեց Տարոնում վերացնել Բագրատունիների իշխանությունը, գավառում ակտիվացան Թոռնիկյանները[49]: Այս առումով Ն. Ադոնցը նշում է. «X դարի վերջին սրանց (Բագրատունիների-Ա. Վ.) ասպարեզից հեռանալուն զուգահեռ իրենց նախկին տիրույթներում կրկին հայտնվում են Մամիկոնյանները: Այն ժամանակաշրջանում, երբ Տարոնում իշխում էին Բագրատունիները, Մամիկոնյանների մի ճյուղ հաստատվել էր Տարոնի արևմտյան մասում, Արածանի գետի ստորին հոսանքում»[50]: Դրա վառ ապացույցն է այն, որ երբ բյուզանդական կայսր Հովհաննես Չմշկիկը (969-976 թթ.) ծրագրել էր 974 թ. Հայաստանի վրայով արշավել Հյուսիսային Միջագետք՝ արաբների դեմ պայքարելու համար[51], հայկական միացյալ զինուժը կայսերական բանակին կանգնեցրեց Հարք գավառում[52]: Հայ իշխող վերնա-

---

[45] **Ն. Ակինյան**, նշվ. աշխ., էջ 50-51: Վերջինիս տեսակետին է հետևում **Կ. Թումանովը** (տե՛ս **Cyrille Toumanoff**, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasie chrétienne (Arménie-Géorgie-Albanie), Roma, 1975, էջ 471):

[46] **Է. Լ. Դանիելյան**, Թոռնիկյանների քաղաքական դերը X դ. հայ- բյուզանդական հարաբերություններում, էջ 64, ծան. 3:

[47] Տե՛ս **Ն. Ակինյան**, նշվ. աշխ., էջ 51:

[48] Սմբատ Մամիկոնյանի մասին տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, (Ե դարից միչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 183:

[49] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 7-9: Վրաստանի պատմության խնդիրներով զբաղվելիս Թոռնիկյաններին անդրադարձել են վրացի ուսումնասիրողները՝ բնականաբար նրանց ծագման և գործունեության վերաբերյալ ունենալով այլ «տեսակետ» Թոռնիկյաններին համարելով վրացիներ (տե՛ս **Бердзенишвили М.** К вопросу о Варазваче // «Труды Института истории АН Грузинской ССР». Тб., 1947, էջ 239-251 (на. груз. яз.), **Метревели Е.** Роль грузинского княжеского дома Чортванели в истории Ивирона. XVIII congré s intern. des études byzantines, Moscou, 1991, Résumés, էջ 764-766, և ուրիշներ):

[50] **Ն. Ադոնց**, Տարոնացիները Հայաստանում և Բյուզանդիայում, Երկեր, «Հայ-բյուզանդական ուսումնասիրություն», հ. Ե, Եր., 2012, էջ 295:

[51] Տե՛ս **Успенский Ф.** История Византийской империи. Расцвет, крушение. М., 2011, էջ 135.

[52] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը Մամբրէ

խավը հասկանում էր, որ մինչ արաբների դեմ ճակատելը կայսրը կփորձեր իրականացնել եթե ոչ ամբողջ Հայաստանի գրավումը, ապա նրա մի քանի գավառների միացումը կայսրությանը: Հայոց թագավոր Աշոտ Բագրատունու (953-977 թթ.) դրոշի տակ էին հավաքվել ոչ միայն Հայաստանի մանր ու մեծ իշխողները, այլև «բովանդակ ամենայն տունն Սասունու»[53]: Ապա մի փոքր անց պատմիչը փաստում է, որ կայսերական բանակատեղի գնացին «իմաստասէրն Լեւոն և Ստատ իշխանն Թոռնեցին»[54]: Նշված Ստատ Թոռնեցին իշխում էր ամբողջ Սասունում և Տարոնի զգալի մասում: Հետագա տասնամյակներում Մամիկոնյան-Թոռնիկյանների իշխանությունը մե՛րթ անկախ, մե՛րթ էլ կիսանկախ վիճակում ավելի ամրապնդվեց, և նրանց տիրապետությունը տարածվեց շրջակա գավառներում: XI դ. երկրորդ կեսին Գրիգոր Մագիստրոս Պահլավունու թղթերում մի քանի անգամ հիշատակվում է Թոռնիկ Մամիկոնյանը[55]: Վերջինս, ինչպես գիտենք Մատթեոս Ուռհայեցու մի վկայությունից, Մուշեղ Մամիկոնյանի որդին էր[56]:

XI դ. կեսերից սկսվում են սելջուկ թուրքերի արշավանքները դեպի տարածաշրջան և Հայաստան: Մինչ այդ Բյուզանդիան խաբեությամբ և խարդավանքներով դարձել էր Հայկական լեռնաշխարհի բացարձակ տերը, և ինքը պետք է պաշտպաներ իր նոր սահմանները[57]: Սակայն բյուզանդացիներն ինչպես միշտ ոչինչ չձեռնարկեցին իրենց նոր կատեպանությունները[58] պաշտպանելու համար:

Օգտվելով բյուզանդացիների անգործությունից՝ սելջուկ թուրքերն անընդհատ ավերի ու թալանի էին մատնում հայկական շրջանները: Այդպիսի մի արշավանքի ժամանակ՝ 1052 թ., նրանք ներխուժեցին Սասուն, որտեղ հանդիպեցին Թոռնիկ Մամիկոնյանի դիմադրությանը: Հայկական զորաջոկատները Մամիկոնյան իշխանի գլխավորությամբ հաղթանակ են տանում սելջուկ թուրքերի նկատմամբ. «Յարձակեցան ի վերայ այլազգեացն և առին զառն և զամենայն աւարն և դարձուցին զամենայն գերութիւնն և մնացեալքն յայլազգեացն մազապուրծ զերծեալք՝ ամօթով գնացին յաշխարհն Պարսից: Եւ քաջն Թոռնիկ մեծաւ ուրախութեամբ դարձաւ ի Սասունք՝ գոհանալով զԱստծոյ, որ ազատեաց զանթիւ բազմութիւնն զՄելտենւոյ քաղաքին ի ծառայութենէ անօրէն ազգին Պարսից»[59] (իմա՝ սելջուկ թուրքեր-Ա. Վ.): Մի քանի ան-

---

Մելիք-Ադամյանի և Ներսես Տեր-Միքայելյանի (այսուհետև՝ **Մատթեոս Ուռհայեցի**), Եր., 1991, էջ 22:

[53] Նույն տեղում:

[54] Նույն տեղում: Հ. Բարթիկյանը նշում է, որ Ստատը գրչական աղավաղում է, գործ ունենք Եվստաթ (Եվստատ) անվան հետ (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 486, ծան. 43):

[55] Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագիրն յառաջաբանով եւ ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, (այսուհետև՝ **Գրիգոր Մագիստրոս**), Աղէքսանդրապոլ, 1910, էջ 214, 215, 219, **նույնի**՝ Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, ԺԱ դար, Եր., 2012, էջ 245-253:

[56] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 222:

[57] Տե՛ս **Մ. Բուռնազյան**, Հայաստանը և սելջուկները XI-XII դդ., Եր., 1980, էջ 41:

[58] Գրավված հայկական հողերը մտնում էին վարչական միավորների՝ կատեպանությունների մեջ (տե՛ս **Հ. Բարթիկյան**, Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. առաջին, Եր., 2002, էջ 238):

[59] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 142, «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», աշխատասիրու-

գամ պարտության մատնելով սելջուկներին՝ Թոռնիկ Մամիկոնյանը կամաց-կամաց ընդարձակում է իր տիրապետության սահմանները՝ գրավելով Արշամունիք և Հաշտյանք գավառները[60]: Հետագայում նրա իշխանությունը հարավում հասնում էր մինչև Նփրկերտի մերձակայքը, իսկ հյուսիսում՝ Արևելյան Եփրատի ափերը[61]՝ ընդգրկելով ամբողջ Տարոն-Տուրուբերանը, կենտրոն ունենալով Աշմուշատը[62]՝ Արածանի գետի վրա: Ապագայում նույնպես շարունակվեց Սասունի Թոռնիկյանների իշխանության վերելքը: Եվ ինչպես Մ. Օրմանյանն է նշում, «ընդարձակութիւն եւ զօրութիւն աւելցուցած էր իր իշխանութեան դէպի Արևմուտք ազդեցիկ դարձած էր նոյն իսկ շրջակայ այլազգի իշխաններուն վրայ»[63]: Մատթեոս Ուռհայեցու մի վկայության համաձայն՝ Թոռնիկյանների զինված ուժերը բաղկացած էին հիսուն հազար հետևակից և վեց հազար հեծյալից[64]: Եթե պատմիչի հաղորդած տվյալները հավաստի են, կարող են փաստել, որ Թոռնիկի և նրա անմիջական հաջորդների օրոք Սասունի իշխանությունը ամենահզորն էր հայկական իշխանություններից: Սակայն պետք է արձանագրել, որ այդ ժամանակ ոչ Հայաստանում իրենց գոյությունը շարունակող պետական միավորումները (Լոռի, Սյունիք, Արցախ) և ոչ էլ հարավ-արևմուտքում գտնվող Տարոն - Սասունի՝ Մամիկոնյան-Թոռնիկյանների իշխանությունները Բյուզանդիայի ագրեսիվ քաղաքականության, ինչպես նաև սելջուկների օրեցօր մեծացող ուժի պատճառով չկարողացան դառնալ համահայկական միավորումներ, որն էլ հետագայում կանխորոշեց նրանց ճակատագիրը. այդ իշխանությունները ժամանակի ընթացքում դադարեցին գոյություն ունենալուց:

Սթափվելով իր անգործությունից՝ Բյուզանդական կայսրությունը փորձեց կանգնեցնել սելջուկ թուրքերի առաջխաղացումը: Սակայն 1071 թ. բյուզանդական զորաբանակները Ռոմանոս կայսեր (1067-1071 թթ.) գլխավորությամբ Մանազկերտի ճակատամարտում սոսկալի պարտություն կրեցին Ալփ-Արսլանից[65]:

Օգտվելով կայսեր պարտությունից՝ Կապադովկիայի զորահրամանատար Փիլարտոս Վարաժնունին կարճ ժամանակամիջոցում ստեղծեց մի ընդարձակ իշխանապետություն՝ Մարաշ կենտրոնով, և

թյամբ Հ. Սերովբե վ. Ագըլեանի (այսուհետև՝ **Սմբատ Սպարապետ**), Վենետիկ, 1956, էջ 54:

60 Տե՛ս **Ս. Երեմյան**, Լիպարիտ զորավարի հաջորդները և Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը, // Տեղեկագիր հաս. գիտ., 1947, թիվ 8, էջ 70:

61 Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Սասունի Թոռնիկյանները, էջ 484:

62 Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 224, **Վ. Պետրոյան**, Սասունի Թոռնիկյան իշխանությունը, էջ 87, **նույնի**՝ Սասուն, էջ 110:

63 **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1513:

64 Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 224: Այս առումով **Հ. Մանանդյանը** նշում է. «Այդ թվերը, թեև կարող են չափազանցված լինել, բայց այնուամենայնիվ, մատնացույց են անում Թոռնիկի իշխանության տակ գտնվող այդ երկրի մեծությունը և հզորությունը» (Երկեր, հ. գ, Եր., 1977, էջ 81):

65 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 17, Բյուզանդական աղբյուրներ, Զ, **Միքայել Ատտալիատես**, Պատմություն, Թարգմանություն բնագրից, ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի (այսուհետև՝ **Միքայել Ատտալիատես**), Եր., 2015, էջ 80-87:

պայքար սկսեց իր իշխանությունը ընդարձակելու համար[66]: Այդ ճանապարհին վերջինս բախվեց Թոռնիկ Մամիկոնյանի հետ: Երկու կողմերը հանդիպեցին Չորրորդ Հայքի Անձիտ գավառի Ալելուա դաշտում: Բախումն ավարտվեց Սասունի տիրոջ հաղթանակով[67]: Չհաշտվելով պարտության հետ՝ Փիլարտոս Վարաժնունին դավադրություն է կազմակերպում Թոռնիկ Մամիկոնյանի դեմ և Մուփարկին ամիրայի ձեռքով 1073 թ. սպանել է տալիս նրան[68]: Վերջինիս հաջորդում է փոքրահասակ որդին՝ Չորտվանելը (1073-1127 թթ.)[69]: Նրա մասին մատենագիրները սակավախոս են: Չորտվանելը կրում էր բյուզանդական «նուվելիսիմուս» տիտղոսը[70], և հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվում է «թագաւորին Սասնոց»[71] ձևով: Չորտվանել Թոռնիկյանը կառավարման սկզբնական շրջանում սելջուկյան հարվածների տակ թուլացավ, և 1096 թ. վերջնականապես քայքայվեց հայկական իշխանության մրցակից Մրվանյանների վերջին տիրակալ Մանսուրի տիրապետությունը Դիարբեքիրում[72]: Օգտվելով դրանից՝ Սասնո իշխանն ընդարձակեց իր տիրույթները՝ տիրանալով երեսուն գյուղերի[73]: Հետագա տարիներին սկզբնաղբյուրները հիմնականում տեղեկություններ են հաղորդում Մամիկոնյան իշխանի կատարած շինարարական աշխատանքների, ինչպես նաև Առաքելոց վանքին կատարած նվիրատվությունների մասին[74]: Երկարատև կառավարումից հետո, 1127 թ. իշխանությունն անցնում է Չորտվանել Թոռնիկյանի որդի Վիգենին: Նրա երկարատև կառավարման ընթացքում հայկական իշխանությունը փոփոխակի հաջողություններով պայքար էր մղում Շահ-Արմենների դեմ[75]: Վիգեն Թոռնիկյանը կարողանում է ազգակցական կապերի՝ ամուսնությունների միջոցով սերտ հարաբերություններ հաստատել շրջակա իշխողների հետ: «Ի հայրապետութեանն տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի և ի տէրութեան Սանսնւոյ Վեգենայ մեծի պռոտօնուելեսիմոսի, որդ-

---

[66] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 222, «Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորւոյ, Ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1870, էջ 406-407, **Միքայել Ասորաղիատես**, էջ 160, **Վարդան վարդապետ**, էջ 104, **Կոմմագենցի**, Փիլարտոս Հայը. Կիլիկեհայ ճոխութեան բուն հիմնադիրը, Հալէպ, 1930, էջ11, **J. Laurent**, Études d'histoire Arménienne, Louvain, 1971, էջ 148-159:

[67] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 224, 226, **Վ. Տոմաշէկ**, Սասուն եւ Տիգրիսի աղբերաց սահմանները պատմական եւ տեղագրական հետազօտութիւն, մաս առաջին, թարգմանեց Հ. Բառնաբաս, Վ. Պիլեզիկճեան, Վիեննա, 1896, էջ 41-43, **Կոմմագենցի**, նշվ. աշխ., էջ 27-28:

[68] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 226, **Գրիգոր Մագիստրոս**, էջ 313, Մ. Օրմանյանը նշում է 1075 թ. (տե՛ս «Ազգապատում», հ. Ա, էջ 1515), Հ. Մանանդյանը՝ 1078 թ. (տե՛ս Երկեր, հ. Գ, էջ 81):

[69] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 226, **Ղ. Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 300, **J. Markwart**, Sütarmenien und die Tigrisquallen, Wien, 1930, էջ 528:

[70] «Թուղթ Երանելւոյն Պողոսի Տարօնեցոյ Ամոյեան Վարդապետի ընդդէմ թէոփիստեայ Հռոմ փիլիսոփային», Կ. Պոլիս, 1752, էջ 274-275:

[71] Նույն տեղում, էջ 330:

[72] Տե՛ս **Իբն Ալ -Ասիր**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981, էջ 226, **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., 1965, էջ 205-206, **Ս. Բուռնազյան,** նշվ. աշխ., էջ 208, 214:

[73] Տե՛ս **Tarikh al-Fariqi Ibu al-Azraq al-Fariqi**, ed. by B. A. L. Awad, Cairo, 1959, էջ 284:

[74] Տե՛ս **Ն. Սարգիսեան**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 232-233:

[75] Տե՛ս **Վարդան վարդապետ,** էջ 127, 128:

ւոյ՝ Չորդուանելի թոռն Թոռնկա մեծի հզօրի և քաջի, որ բնիկ յԱստուծոյ հաստատուն հիմնակառուցեալ ունի զաթոռ հայրենի տէրութեան իւրոյ, և ի թուականութեանս Հայոց ի ՈԺԸ (1169), հրամանաւ երանելի քրիստոսասէր թագուհոյ Մելէքսեթոյ, ամուսնւոյ Վեգենայ, որ է յազգէ Արծրունի և ի շառաւեղէ Սրբոյն Վարդանայ, դուստր մեծ իշխանին Մոկաց Հմայեկի»[76]: Վիգեն Թոռնիկյանը, տարբեր ժամանակահատվածներում դաշնակցելով շրջակա տիրողների հետ, փորձում է անվտանգ պահել իր իշխանության սահմանները, ինչը մեծ մասամբ նրան հաջողվում է: Սակայն Վիգենի կառավարման վերջին շրջանում նրա իշխանությունը սահմանափակվում էր Սասունի մի քանի գյուղերով[77]: Նա մահանում է 1176 թ.՝ « մեռաւ Վիգէն, տէրն Սասնոյ»[78], և նրան հաջորդում է ոչ թե որդին, ինչպես նշում է Վ. Պետոյանը[79], այլ թոռը՝ Շահնշահը: Վերջինիս օրոք Սասունի իշխանությունը կախվածության մեջ էր գտնվում Շահ-Արմենից, և Սասունը կառավարում էր որպես կիսաանկախ տիրակալ[80]: Սակայն շրջակա մահմեդական տիրակալներն ամեն գնով փորձում էին վերացնել բնիկ հայկական իշխողներին: Շահնշահ Թոռնիկյանը, որ սկզբնական շրջանում կարողանում էր հաղթանակ տանել Խլաթի ամիրա Սեյֆ Ադ-դին Բեկ Թեմուրի (1183-1193 թթ.)[81] նկատմամբ, վերջիվերջո պարտություն է կրում. «Սասունցիք (Սանասինա), որոնք նույնպես հայեր են, սակայն անառիկ բերդեր ունեն Խլաթի մոտ և դաշինք ունեն Խլաթի տիրոջ հետ: Այդ բերդերը, ըստ պայմանագրի, իրենց ձեռքում պահեցին ինքնուրույն կերպով, մինչև հինգ հարյուր ութսուն թվականը (1184-1185), երբ մահմեդականները գրավեցին այդ բերդերը և նրանց դուրս քշեցին այնտեղից»[82]: Շահնշահ Թոռնիկյանը իր ընտանիքով գաղթեց Կիլիկիա[83]՝ Լևոն Բ Ռուբինիանի տիրապետության ներքո[84]: Այսպիսով՝ 1185 թ. կործանվեց Մամիկոնյան-Թոռնիկյանների իշխանությունը Հարավարևմտյան Հայաստանում, և մահմեդական տիրակալները կարողացան

---

[76] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Եր., 1988, էջ 194:

[77] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 12, Ասորական աղբյուրներ, Բ, **Անանուն Եդեսացի,** ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Եր., 1982, էջ 133:

[78] «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի», հրատարակության համար պատրաստեց Աշ. Աբրահամյանը, Եր., 1942, էջ 19:

[79] **Վ. Պետոյան**, Սասունի Թոնիկյան իշխանությունը, էջ 88, **նույնի**՝ Սասունը, էջ 129: Ա. Տեր-Ղևոնդյանը նույնպես կարծում է, որ Շահնշահը Վիգենի որդին էր (տե՛ս **Վ. Պետոյան,** Սասունի Թոռնիկյան իշխանությունը, էջ 486), սակայն Վիգենի որդին՝ Շահնշահի հայրը՝ Չորտվանելը, մահացել է երիտասարդ հասակում՝ 1165 թ., իսկ Շահնշահը Վիգենի թոռն էր (տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ե-ԺԲ դդ., էջ 196-197), հմմտ., **Հ. Մարգարյան**, Հայաստանի քաղաքական դրությունը XII դ. 20-80-ական թվականներին, «Հայոց պատմություն», էջ 203:

[80] Տե՛ս **Հ. Մարգարյան**, նշվ. աշխ., էջ 203:

[81] Տե՛ս **Հ. Թուրշյան**, Շահ-ի-Արմեններ, ՊԲՀ, 1964, թիվ 4, էջ 119:

[82] **Իբն Ալ -Ասիր**, էջ 212:

[83] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, էջ 201: Շահնշահը Լևոն Ռուբինյանից (1187-1219 թթ.) 1188 թ. ստանում է Սելևկիա ամրոցը (տե՛ս նույն տեղը):

[84] Կիլիկիայում Շահնշահի և նրա եղբոր՝ Հեթումի գործունեության մասին տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, էջ 297-298, **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, պատմաքաղաքագիտական հետազոտություն, հ. Բ, Եր., 2007, էջ 177-178:

բնիկ հայկական հողերում՝ Սասունում և շրջակա գավառներում, վերացնել ամենահզոր հայկական մեծ իշխանությունը:

Սակայն սրանով Մամիկոնյաններն ամբողջությամբ չվերացան Հայոց աշխարհից: Մարծպան Մամիկոնյանի սերունդները[85] Զաքարյաններին իշխանապետության օրոք հաստատվեցին հյուսիսային Հայաստանում և հայ-վրացական զորաբանակի կազմում մասնակցեցին Հայաստանի մի շարք շրջանների ազատագրմանը: Տոհմի նշանավոր ներկայացուցիչ Սարգիս Մամիկոնյան – Համազասպյանցը «մեռաւ ի պատերազմի»[86], հավանաբար Կոտայքում՝ Բջնիի ազատագրման ժամանակ[87]: Իրենց մատուցած ծառայությունների համար Մամիկոնյանների սերունդները Զաքարյաններից ստացան մի շարք կալվածքներ և գյուղեր (Մղարդ, Դսեղ, Կարմիր քար, Կկուաշեն, Ծաղկուտ, Ագադակ)[88] և այլ բնակավայրեր: Հետագա տարիներին ևս Մամիկոնյանները մասնակից եղան երկրում կատարվող կարևոր իրադարձություններին: Մասնավորապես, 1216 թ. Դվինում Իվանե Զաքարյանը հրավիրում է նշանավոր իշխանների ժողով՝ քննելու սուրբ Խաչի պատկանելության հարցը: Այստեղ էականը այն է, որ երկրի տերերի հավաքին մասնակցում էր Մարծպան Մամիկոնյանը. «Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր հրամայէր քննել՝ զԲուպակն և զՄարծուանն, զԻվան Դպելն…»[89]: Այս ամենից երևում է, որ Մամիկոնյանները դեռևս մեծ կշիռ ունեին պետական կառավարման համակարգում:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ IX դ. սկզբներին Մամիկոնյանները, կորցնելով իրենց կալվածքների հսկայական մասը, այնուամենայնիվ վերջնականապես դուրս չմղվեցին Հայաստանի քաղաքական կյանքից, ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ: Պարզվում է, որ հետագայում Բագրևանդում, Արագածոտնում, Տարոն – Սասունում, իսկ ապա՝ Հյուսիսային Հայաստանում նրանց շառավիղները[90] ստեղծեցին իրենց իշխանությունները, որոնցից Սասունի Մամիկոնյան-Թոռնիկյան իշխանությունը XI դ. երկրորդ կեսին և XII դ. առաջին կեսին Հայաստանի ամենահզոր հայկական իշխանությունն էր, որը միաժամանակ պայքարելով շրջակա մահմեդա-

---

[85] Մամիկոնյանները հյուսիսային Հայաստան էին գաղթել Տայքից, այդ մասին է վկայում Սանահինի վանքի արձանագրությունը, որտեղ Մարծպան Մամիկոնյանի ժառանգները վանքին են նվիրում Մանթաշի կեսը և Տայքում իրենց ունեցած կալվածքները (տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Եր., 1957, էջ 105-106, «Դիվան հայ վիմագրության», պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան, Եր., 2012, էջ 37):

[86] **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 174, «Դիվան հայ վիմագրության», IX, էջ 102:

[87] Տե՛ս **Ա. Շահինյան**, Մամիկոնյան-Համազասպյան տոհմը հյուսիսային Հայաստանում XII-XIII դարերում, ԼՀԳ., 1968, թիվ 3, էջ 88-89: Բջնին հայ-վրացական զորաբանակի կողմից ազատագրվել է 1201 թ. (տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 138, հմմտ. **Ա. Շահնազարյան**, Զաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, ՀՊՀ, Եր., 2005, էջ 143):

[88] Տե՛ս **Ա. Շահինյան**, նշվ. աշխ., էջ 91:

[89] «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 355:

[90] Մ. Զուլալյանը կարծում է, որ Մամիկոնյանների՝ մահմեդականություն ընդունած մեկ այլ ճյուղ իր իշխանությունն է հաստատել Արճեշում և նրա շրջակայքում (տե՛ս «Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии». Ер., 1970, с. 65):

կան իշխանությունների դեմ, շատ հաճախ կարողանում էր հաղթանակած դուրս գալ այդ պայքարից, սակայն մի շարք պատճառներով Սասուն - Տարոնի իշխանությունը չկարողացավ համահայկական նշանակություն ձեռք բերել և միավորել շրջակա հայկական իշխանությունները:

Բանալի բառեր – *Տարոն-Սասուն, Մամիկոնյաններ, Թոռնիկյաններ, Բագրևանդ, Գրիգոր Մամիկոնյան, Բյուզանդական կայսրություն, արաբներ, ապստամբություն*

АРГИШТИ ВАРДАНЯН – ***Княжеский род Мамиконянов в Багреванде и Тароне–Сасуне (IX-XII вв.).*** – После поражения народного восстания в конце VIII в. вес рода Мамиконянов в политической жизни Армении заметно снизился. Тем не менее он сохранил свою власть в нескольких областях (Багреванд, Тарон–Сасун и др.). За короткое время Мамиконяны и Торникяны создали в Тароне–Сасуне и прилегающих к нему районах одно из наиболее сильных в Армении княжеств. Однако его борьба с соседними мусульманскими государствами завершилась поражением. Так на юге страны пало последнее сильное армянское княжество.

Ключевые слова: *Тарон–Сасун, Мамиконяны, Торникяны, Багреванд, Григор Мамиконян, Византийская империя, арабы, восстания*

ARGISHTI VARDANYAN – ***The Princely Family of the Mamikonyans in Bagrevand, Taron-Sasoun (IX-XII).*** – The princely family of the Mamikonyans after the defeat of the popular uprising of the eighth century in the political life of Armenia began to play a small role. They kept their domination in Bagrevand, Taron - Sasoun and a number of regions of Armenia. For a short time, the Mamikonyans were able to create one of the strong Armenian princedoms of their time in the Taron Sasoun and in the neighboring regions. But the principality of the Mamikonyan-Tornikyans was defeated in the struggle against the surrounding Muslim principalities. The last strong Armenian principality disappeared in southern Armenia

Key words: *Taron-Sasoun, Mamikonyans, Tornikyans, Bagrevand, Gregor Mamikonyan, Byzantine Empire, Arabs, revolt*